

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության և Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանն առնթեր պետական մաքսային տեսչության միջև մաքսանենգության և մաքսային կանոնների խախտման, ինչպես նաև թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչությունը և Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանն առնթեր պետական մաքսային տեսչությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր, նպատակ ունենալով ակտիվացնել գործունեությունը մաքսանենգության և թմրամիջոցների ու հոգեներգործող նյութերի ապօրինի առևտրի և շրջանառության կանխարգելման, հետաքննման և կասեցման գործում,

նկատի ունենալով 1961 թվականին ընդունված Թմրանյութերի մասին միացյալ Կոնվենցիայի դրույթները, Հոգեներգործող նյութերի մասին 1971 թվականին ընդունված Կոնվենցիան և Թմրադեղերի ու հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառության պայքարի մասին 1988 թվականին ընդունված Կոնվենցիան,

ձգտելով այդ բնագավառում զարգացնել համագործակցությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների տնտեսական և այլ շահերը հնարավոր վնասներից զերծ պահելու նպատակով Պայմանավորվող կողմերը կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք ուղղված են արագացնելու մաքսային վերահսկողությունը բեռնափոխադրումների, ուղևորափոխադրումների և փոստային առաքումների նկատմամբ, ինչպես նաև տրանսպորտային միջոցների, ուղևորաբեռների, փոստային առաքումների, արտարժույթի, այլ վճարման միջոցների և արտարժույթային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման կանխարգելմանը:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը, իրենց պետություններում գործող օրենքները և կանոնները պահպանելու նպատակով, սույն Համաձայնագրի

սահմաններում կհամագործակցեն մաքսանենգության և մաքսային կանոնների խախտման, ինչպես նաև թմրանյութերի և հոգեմեդիկամենտների անօրինակ առևտրի կանխարգելման, հետաքննման ու կասեցման նպատակով:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրի հիման վրա կհամագործակցեն իրենց իրավասությունների շրջանակներում և պահպանելով ներքին օրենսդրությունը, կփոխանակեն՝

- ա) տեղեկություն գործող մաքսային օրենսդրության մասին,
- բ) տեղեկություն մաքսանենգության և մաքսային կանոնների խախտման դեմ պայքարի մեթոդների վերաբերյալ, ինչպես նաև մաքսանենգության, թմրամիջոցների ու հոգեմեդիկամենտների անօրինակ առևտրի կանխարգելման, հետաքննման և կասեցման նպատակով գործունեության ակտիվացման վերաբերյալ,
- գ) վերահսկողության տեխնիկական միջոցների, հատուկ վարժեցրած շների օգտագործման փորձը,
- դ) մասնագետներ՝ թմրամիջոցների անօրինակ շրջանառության դեմ պայքարի մեթոդների ուսուցանման նպատակով,
- ե) մաքսանենգության և թմրամիջոցների անօրինակ շրջանառության դեմ պայքարի հարցերի վերաբերյալ գիտական հրապարակումներ և ուսումնական ձեռնարկներ,
- զ) տեղեկություն թմրամիջոցների և հոգեմեդիկամենտների անօրինակ առևտրի արտադրության նոր տեսակների և տեղերի, դրանց անօրինակ տեղափոխման երթուղիների ու դրանց թաքցնելու եղանակների մասին,
- է) տեղեկություն թմրամիջոցների և հոգեմեդիկամենտների անօրինակ շրջանառման և լաբորատոր հետազոտության բնագավառում,
- ը) տեղեկություն տարբեր երկրներում և տարածաշրջաններում թմրամիջոցների գների փոփոխման վերաբերյալ,
- թ) տեղեկություն թմրամիջոցների սինթեզման համար օգտագործվող ելակետային քիմիկատների վերաբերյալ,
- ժ) տեղեկություն ինչպես բուսական, այնպես էլ սինթետիկ ծագում ունեցող թմրամիջոցների իսկական օրինակների վերաբերյալ:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, իր սեփական նախաձեռնությամբ կամ մյուս Պայմանավորվող կողմի հարցմամբ, ներկայացնում է օպերատիվ տվյալներ՝

ա) մաքսանենգությամբ կամ թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող հայտնի կամ այդ գործում կասկածվող անձանց վերաբերյալ,

բ) փոխադրամիջոցների, բեռների և փոստային առաքումների վերաբերյալ, որոնք օգտագործվում են մաքսանենգ ապրանքների տեղափոխման համար, և երկու Կողմերից մեկի տարածքով մյուսը տարանցիկ փոխադրվող թմրանյութերի ապօրինի շրջանառության կամ մյուս Կողմի տարածք թմրանյութերի անլեգալ ներմուծման մասին,

գ) Կողմերից մեկի տարածքից մյուսի տարածք մաքսանենգ ապրանքների և թմրամիջոցների ապօրինի տեղափոխման հայտնաբերման փաստերի մասին:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերին ներկայացվող ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր տեղեկությունը կհամարվի գաղտնի և կօգտագործվի միայն սույն Համաձայնագրի իրագործման նպատակով:

Պայմանավորվող կողմերը առանց մյուս Պայմանավորվող կողմի համաձայնության այլ գերատեսչություններին և զանգվածային լրատվական միջոցներին տեղեկություններ չեն տրամադրում, որոնք ստացել են սույն Համաձայնագրի պայմանների համաձայն, եթե դրանց տարածումը կարող է վնաս հասցնել մյուս Կողմի կամ Կողմերի համատեղ գործունեության շահերին:

Հոդված 6

Եթե, համաձայն 3-րդ և 4-րդ հոդվածների, համագործակցության վերաբերյալ հարցումը կարող է վնաս հասցնել հարցվող Կողմի ինքնիշխանությանը, անվտանգությանը, իրականացվող քաղաքականությանը կամ կենսական նշանակություն ունեցող այլ բնագավառներին, ապա դիմումը կարելի է մերժել՝ նշելով մերժման հիմքերը ու շարժառիթները:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերը, իրենց ներքին օրենսդրության համաձայն, անհրաժեշտության դեպքում կկիրառեն թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի վերահսկվող առաքման մեթոդը՝ նպատակ ունենալով ավելի արդյունավետ պայքարել դրանց ապօրինի շրջանառության դեմ:

Հոդված 8

Եթե Պայմանավորվող կողմերից մեկը շահագրգռված է մյուս Պայմանավորվող կողմի մաքսային մարմինների պաշտոնատար անձի՝ մաքսանենգության կամ մաքսային կանոնների խախտման փաստով որպես վկա կամ փորձագետ մասնակցությամբ, ապա նա իրավունք ունի համապատասխան հարցումով դիմելու մյուս Կողմին:

Այդպիսի հարցման բավարարումը կկարգավորվի սույն Համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներին համաձայն:

Պայմանավորվող կողմերի պաշտոնական անձինք սույն Համաձայնագրի մյուս մասնակից պետության տարածքում գտնվելու ընթացքում պետք է ունենան իրենց պաշտոնական լիազորությունները հաստատող փաստաթուղթ:

Մյուս Կողմի պետության տարածքում գտնվելու ընթացքում նրանք չպետք է կրեն համազգեստ և զենք:

Աշխատակիցների անվտանգությունը մյուս Կողմի պետության տարածքում ապահովում է այդ Կողմը:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման հետ կապված բոլոր վիճելի հարցերը Կողմերի միջև կլուծվեն բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 10

Պայմանավորվող կողմերն իրավունք ունեն իրենց նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ և լրացումներ մտցնել սույն Համաձայնագրի մեջ:

Կողմերի միջև գրագրությունը կիրականացվի ռուսերեն:

Հոդված 11

Համաձայնագրում կատարված բոլոր փոփոխությունները և լրացումները կհամարվեն ընդունված, եթե հայտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում Կողմերից որևէ մեկը չի հայտնի իր առարկությունների մասին:

Հոդված 12

Պայմանավորվող կողմերը հրաժարվում են սույն Համաձայնագրի
իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցման պահանջից,
բացառությամբ մասնագետների այցելությունների հետ կապված
ծախսերի:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու
օրվանից և կգործի հինգ տարի ժամկետով, որից հետո այն
ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հինգ տարիների համար, եթե
Պայմանավորվող կողմերից ոչ մեկը վերջնական ժամկետը լրանալուց 6
ամիս առաջ գրավոր չի տեղեկացնի Համաձայնագրի գործողությունը
դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1996 թվականի փետրվարի 14-
ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղրղզերեն և ռուսերեն:

Հայերեն և ղրղզերեն տեքստերի մեկնաբանման դեպքում
տարաձայնություններ առաջանալիս հիմք է ընդունվում ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1996 թվականի փետրվարի 14-
ից: